

Կողբ գյուղի ազգերի պատմությունը

Հեղինակ: սիրող-պատմաբան Տիգրան Սարգսի Ազատյան

Նախաբան

Կողբի ազգերի պատմությունը հեղինակը սկսել է գրել 1970-ից՝ հիմք ընդունելով բազմաթիվ աղբյուրները և սեփական ուսումնասիրությունները, այդ թվում՝ հայոց պատմության, աշխարհագրության, ճարտարապետության մի շարք գրքեր: Նյութը տարիներ շարունակ ձեռագիր վիճակով գտնվել է Կողբի գրադարանում և քաջ ծանոթ է Կողբի պատմությունով հետաքրքրվող մարդկանց (նման աշխատանքներ կան Բերդավանի, Կոթիի և մյուս գյուղերի ազգերի վերաբերյալ):

Հեղինակային իրավունք Copyright ©

Այս ուսումնասիրությունը տարածվում է միայն ծանոթացման նպատակով: Այլ տեղեր օգտագործելու համար կարող եք դիմել: Հարցերի, առաջարկների և դիտողությունների համար գրել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ amtigran@gmail.com կամ դիմել ՀՀ, Տավուշի մարզ, Կողբ՝ Վարդան Տիգրանի Ազատյանին:

Համառոտ պատմություն

Կողբ գյուղի պատմությունը գալիս է դարերի խորքից: Մի շարք մտավորականներ այն կարծիքին են, որ Կողբը 1600 տարեկան է՝ հիմք ընդունելով, որ 387թ. Կողբափոր գավառը միացել է Վրաստանին և մտել Պարսկաստանի տնօրինության տակ: Այս ենթադրությունը լրիվ սխալ է, քանի որ չէր կարող պատահել, որ բերդը իր գավառով կազմավորվեր 387թվին և միանար Վրաստանին, այն էլ՝ Պարսկական իշխանության մեջ:

Բազմաթիվ պատմական աղբյուրներից պարզվում է, որ գյուղի իսկական տարիքը հայտնի չէ, քանի որ միջնադարյան թուրք-սելջուկների 1071թ. և թաթար-մոնղոլների արշավանքի ժամանակ ավերված բերդից ոչ մի արձանագրություն մեզ չի հասել: Այսօր էլ դեռ նշմարելի են բերդի հիմքերի մնացորդները: Հարց է առաջանում, բայց քանի՞ տարեկան կարող է լինել Կողբը: Կողբի առաջին ուսումնասիրողն եղել է Ալեքսանդրիացի աշխարհագիր Կոսմոգրոս-Պողեոմեոսը, որը ապրել է 90-ից 168թթ.:

Ըստ «Աշխարհացույցի» նա Կողբը մեկնաբանել է երկու ձևով, Կողբա-քար բերդ, կամ Կողբա-բերդավան: Գավառը ունեցել է 250 քվմ տարածություն և ընդգրկում է Կողբա գետի ջրահավաք ավազանը՝ մի կողմից Ջուջևանի մոտի Էլակ լեռնաբազուկը, իսկ մյուս կողմից՝ Պապաքարի լեռնաբազուկը:

Գյուղի անունը կապված է Իգդիրի շրջանի Կողբ ավանի հետ: Մ.թ.ա. երկրորդ դարում հայոց Արտաշես առաջին թագավորը իրար միացրեց Հայաստանի իրարից անկախ փոքր իշխանությունները և ստեղծեց միասնական մի հզոր պետություն՝ «Մեծ Հայք» անունով: Հետագայում Արշակունյաց դինաստայի հիմնադիր Տրդատ առաջին թագավորը 66-ից 88թթ. Կազմավորեց Գուգարք նահանգը՝ հետևյալ գավառներով՝ Չորափոր, Կողբափոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Արդահան, Ջավախք, Կղարջք և Աշոցք («Հայաստանի Պատմական Աշխարհագրություն», 257 էջ):

Այդ նույն պատմության 97-րդ էջում նշված է, որ Արտաշես Ա-ի ժամանակ (Մ.թ.ա. 189-ից 160թթ.) Գուգարքը եղել է նահանգի կենտրոնը: Այսպիսով Կողբաքար բերդը, իր գավառով մտավորապես ունի 2000 և դեռ ավելի տարիք: Կողբաքար բերդը դարերի ընթացքում բազմիցս ընկել է օտար նվաճողների հարվածի տակ: Սկսած մ.թ.ա. երկրորդ դարից: Մ.թ.ա. երկրորդ դարում ավանական ցեղերը (Օսեթիների նախնիները) գրավել են Վրաստանը և հարձակվել Հայաստանի վրա: Հայոց Արտաշես թագավորը ջախջախում է նրանց և թագավորի տղային գերի վերցնում: Նա նույնիսկ փախցնում է թագավորի դստերը՝ Սաթենիկին և ամուսնանում նրա հետ:

640 թ. Հայաստան են ներխուժում արաբները, 1071 թվին՝ թուրք-սելջուկները, 1236 թվին թաթար-մոնղոլները, հետագայում միջին ասիական՝ Ակ-կոյունլու և Կարա-կոյունլու թուրքական ցեղերը: Պարզ բան է, որ հայ ժողովրդին մնում էր, որ պաշտպանության համար տեղաշարժվեր խոր անտառները, լեռները և կիրճերը: Նման ճակատագիր է ունցել Նան Կողբ

գյուղը, որի բնակիչները ունեն տարբեր աշխարհագրական ծագումներ: մեր շրջապատի անտառներում այսօր էլ կան հին բնակատեղիներ, վանքը, մատուռներ, գերեզմանոցներ և բերդեր:

Քանի որ Արտաշես Ա-ն մ.թ.ա. երկրորդ դարում վերականգնել է Հայաստանի սահմանները և Քուռ գետը դարձել է մեր հյուսիսային սահմանը՝ ուստի Քուռ գետի հովտում նա կառուցել է մի շարք բերդեր՝ սահմանները ամրապնդելու համար: Դրանցից մեկն էլ եղել է Կողբաքար բերդը, որի առաջին բնակիչները եղել են Ադի Կողբից այստեղ փոխադրված Ազատյան և Հարությունյան (Փանոսյան), ազգերից մի քանի ընտանիքներ:

Դարերի ընթացքում պատերազմների պատճառով գյուղին անդամագրվել են բազմաթիվ ազգեր, որոնք ունեն աշխարհագրական տարբեր ծագումներ, դեռ այսօր էլ այդ ազգերի առանձին անհատների մոտ զգացվում է իրենց նախնիներից ժառանգաբար ստացած բնավորության, քաղաքակրության և այլ հատկանիշներ: 1826-ից 1828 թթ. տեղի ունեցած պարսկական և նրանց աջակցող՝ մեր հարևան թուրքերի համատեղ պատերազմի հետևանքով շատ մեծ տեղաշարժ է տեղի ունեցել մեր ժողովրդի կյանքում (Խ. Աբովյան՝ «Վերք Հայաստանի»): Այսօր Լոռու տարբեր գյուղերում կարելի է հանդիպել բազմաթիվ ազգերի, որոնք մեր տարածաշրջանի տարբեր գյուղերից փախուստի մատնվածների սերունդներն են:

Ազգերի մասին

1.Ազատյան – մ.թ.ա. երկրորդ դարում Արտաշես առաջինի ժամանակ, տոհմերի մի մասը ստացել է ազնվական-կալվածատիրական իրավունք, որին տվել են «Ազատներ» տիտղոսը:

Տրդատ Ա-ի հրովարտակով Ազատյան տոհմից մի քանի ընտանիքներ վերաբնակեցնում են նոր կառուցված սահմանազլխային բերդում, որը իր Կողբ անունը ստացել է տեղափոխված Ազատյան և Հարությունյան (Փանոսյան) ազգերի շնորհիվ: 1826-1828թթ. Լոռու բռնկադայից հետո ազգի մոտ 30%-ը փոխադրվում է Ղալաչա, իրենց հողատարածությունների պահպանման համար: Ազատյանները այստեղ ևս պահպանել են իրենց կալվածատիրական և ազնվական տիտղոսը: Կողբում 76 իսկ Ղալաչայում 35 ընտանիքներ են ներկայումս (1980-ական թվականներ):

2.Հարությունյան – նույնպես գյուղի հիմնադիր ազգերից մեկն է: Նախկին ազգանունը եղել է Փանոսյան, գյուղում կան 29 ընտանիքներ:

3.Անանյան – Այս ազգի հիմնադիրը համարվում է 946-968թթ. Սանահինի վանքի ամենայն հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին: Այդ ժամանակաշրջանում սանահինի վանքը հոգևոր կենտրոն էր: 1236թ. Թաթար-մոնղոլների արշավանքի ժամանակ այս ազգը գալիս է դեպի Կողբի անտառները՝ հետագայում վերաբնակվում Կողբում: 1826թ. Պարսիկների և թուրքերի արշավանքի ընթացքում ընկնում են Լոռու ձորի շրջափակման մեջ: Ռուսական բանակի գալուց հետո, երբ Հայաստանը ազատագրվում է, այս ազգը Լոռու ձորից 1828թ. Բոնում է տարբեր ճանապարհներ՝ 1. Կողբ, 2. Բարանա, 3.Ջուջևան, 4.Իջևան, 5.Դիլիջան, 6.Շնող, 7.Մարգահովիտ (Համգաչիման):

Տիգրան Ազատյան – Կողբի ազգերի պատմությունը

4. Ավագյան – 12-13-րդ դարերում հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական կյանքում լուրջ դեր են խաղացել Ջաքարյան իշխանները: Նրանք մտենլով վրացական արքունիքի հովանավորության տակ 12-րդ դարի վերջերին Հայաստանը և Վրաստանը ազատագրել են թուրք սելջուկներից: Ջաքարե և Իվանե եղբայրները Հայաստանը բաժանել են երկու մասի, Դեբետ գետի սահմանագծով: Ջաքարեի նստավայրը եղել է Լոռի բերդը, իսկ Իվանեինը՝ Հաղպատի մոտի Կայան բերդը: 1236 թվին մոնղոլական արշավանքի ժամանակ Իվանեի որդի Ավագը, որ այդ ժամանակ հայ-վրացական բանակի գլխավոր հրամանատարն էր՝ իր տոհմով Հաղպատից փոխադրվում է վանքի անտառները, իսկ հետագայում՝ Կողբ: Կողբի մեծ գերեզմանոցի խաչքարերը կազմավորել է նա: Ավագի հայրը՝ Իվանեն մահացել է 1234 թվին, իսկ Ավագը՝ 1252 թվին: Երկուսն էլ թաղված են Ախթալայի, իրենց կառուցած վանքում: Ավագի մահից հետո նրա սերունդները փոխում են ազգանունը՝ Ջաքարյաններից դառնալով Ավագյան:

5. Բարսեղյան – Տեր-Բարսեղի տոհմի մեջ են մտնում՝ Բարսեղյանները՝ 65, Եգանյանները՝ 17, Խասիկյանները՝ 18 ընտանիքներ: Պահլավունիները Հայաստանի հնագույն իշխանական տներից մեկն է եղել: Պահլավունի Ապիրատ իշխանի մահից հետո ազգի մի հատվածը գրվում է Ապիրատյան: 1105թ. Լոռու վասալ թագավոր Կյուրիկեն Անի քաղաքի վարդապետ, Շիրակի առաջնորդ Բարսեղ Ա-ին հրավիրում է Հաղպատ և Աղվանքի կաթողիկոսի միջոցով նրան օծում են ամենայն հայոց կաթողիկոս, որը մահացել է 1113թ.՝ ըստ Կիրակոս Գանձակեցու: Նրա մահից հետո, նրա սերունդները գրվում են Տեր-Բարսեղյաններ: 1236-թվին, երբ թաթար-մոնղոլները ավերում են Հաղպատի Կայան բերդը, Բարսեղյան ազգը ևս ստիպված է լինում տեղաշարժվել դեպի մոտակա անտառները և հետագայում անդամագրվել Կողբ գյուղին:

6. Վարդամյան (Վահրամյան) – այս ազգը Ջաքարյան իշխանական տան կրտսեր ճյուղն է: Թամարա քագուհին Կոթի գյուղի մոտի Գագ ամրոցը նվիրում է Ջաքարյան փոքր Ջաքարեին: Հետագայում նրա որդի Վահրամը շարունակում է նրա թողած իշխանությունը: 1236 թվականին, երբ Մոնղոլները ավերում են Գագ ամրոցը, Վահրամը Թամարա թագուհու դստեր՝ Ռուսուդանի հետ թաքնվում են Քուրթախի բերդում: Սակայն հետագայում Վահրամը գալիս է Կողբ՝ իր մոտ ազգական Ավագ Ջաքարյանի մոտ: Այդ նույն Վահրամից է առաջացել Կողբի Վահրամյան ազգը (22 ընտանիք):

7. Աբովյան - Մելիք-Աբովը (Հովսեփյան), 18-րդ դարի երկրորդ կեսերին եղել է Ղարաբաղի նշանավոր քաղաքական դեմքերից մեկը: Նա կապված է եղել ռուս զենեքալ Պոսյոմկինի հետ, Ղարաբաղը պարսիկներից ազատագրելու համար, որի համար Բերախիմ խանը նրան 1787 թվականին բանտարկում է Շուշիում: Նա բանտից փախչում է և վրաց թագավոր Հերակլ երկրորդին խնդրում իր տոհմին և հպատակներին թույլատրի վերաբնակվելու Վրաստանում: Մելիք-Աբովը 1795 թվին իր խմբով Ղարաբաղի Գյուլիստան բերդից փոխադրվում է Մառնեուլից ոչ հեռու Դաղեթ գյուղը: Հետագայում նրա տոհմը վերաբնակվում է Կողբ գյուղում, իսկ հպատակները՝ Կոթի գյուղում: 1826-1828 թթ. Լոռու բլոկադայից հետո Մելիք-Աբովի տոհմի մի մասը վերաբնակվում է Օձուն, Ստեփանավան և Ահնիձոր գյուղերում, իսկ հպատակների մի մասը Կոթիից գալիս են Կողբ, Բերդավան: Կողբում Մելիք-Աբովի ժառանգներն են Միսկարանք, Պողոսանք, Բաղդասարանք, Դավթանք, Կալետանք, Չանգալանք, Դոմբնանք, Հեքմանք, Մալնանք, Խարազանք, Օվագումանք, իսկ հպատակները՝

Աշուղանք, Աջառհոյանք, Ճուղուրանք, Ղարգանք, Ստլանք (ընդամենը 120 ընտանիք, որից 89-ը՝ իսկական, 31-ը՝ հպատակներ):

8.Թանդիլյան – Դավիթ բեկին, երբ հրավիրում են սյունեցիները, նա իր հետ բերում է նաև 30 հայ զինակիցներ՝ Հայաստանը թուրք-պարսկական լծից ազատելու համար, դրանցից է եղել նաև Ավթանդիլ գորավարը, որի անունից նրա սերունդները իրենց ազգանունը դարձրել են Ավթանդիլյան: Այսօր էլ Ղալաչայում կա Ավթանդիլյան ազգանունը: Հետագայում Ավթանդիլյանների մի մասը գրվել է Թանդիլյան: 1826 թվականին Արևմտյան Հայաստանից այս տոհմի մի մասը ևս ընկնում է Լոռու ձորի շրջափակման մեջ, իսկ 1828 թ. Շրջափակումից հետո բաժանվում են մի քանի խմբերի և վերաբնակվում Հաղպատում, Բերդավանում, Կողբում և Ախթորփիում: Ներկայումս Կողբում կա 18, Ղալաչայում 14, Հաղպատում՝ 20 ընտանիքներ:

9.Եղիազարյան – Եղիազարը ևս Դավիթ Բեկի գորավարներից է եղել, որի տոհմի մի փոքր մասը 18-րդ դարի վերջին եկել է Ոսկևան, իսկ 1826-28 թթ մի ընտանիք եկել է Կողբ:

10. Փաշիկյան (Ալավերդյան) – Պատմության մեջ մտած Մելիք-Բարխուդարի եղբայր Քաջ-Ալավերդին 18-րդ դարի կեսերին եղել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի նշանավոր դեմքերից մեկը: Նախիջևանի մոտ նա ջախջախել է թուրքական զորքերին և հինգ օր քեֆ կազմակերպել ի պատիվ մեծ հաղթանակի: Դարանակալած թուրքերը զիջերը այս մարդուն գլխատում են: 18-րդ դարի վերջերին այս տոհմը ևս գաղթվում է և գալիս Ոսկևայր: 1828 թ. Լոռու բլոկադայից հետո ցրվում տարբեր տեղեր՝ Օձուն, Արճիս, Բաղանիս, Կողբ, Բարեկամավան և այլն: Կողբում կան 33 ընտանիք՝ Փաշիկ իշխանի մահից հետո դարձել են Փաշիկյաններ:

11. Ղարախանյան – Ղարախան բեկը Նախիջևանի Ճահուկ գյուղից է, 18-րդ դարի հայ ազատագրական շարժման գորավարներից մեկը: Դավիթ-Բեկի և Մխիթար սպարապետի մահից հետո, երբ Սյունիքի դրությունը բարդանում է սրա տոհմը գալիս է մի մասը Շամշադին, իսկ մյուսը՝ Կողբ: Կողբում 32 ընտանիք են:

12. Ղուլիջանյան – Նաղիր շահի գորավարներից մեկը եղել է հայազգի հազարապետ Ղուլի բեկը՝ Կողբի Ղուլիջանյան ազգի հիմնադիրը, ծագումով՝ Նախիջևանցի: Ծագումով Նախիջևանցի տոհմը եկել է 18-րդ դարի վերջին և ներկայումս 32 ընտանիք են:

13. Ջաղինյան – Ջաղինյան ազգի հայրենիքը ախալցխից է ոչ հեռու «Ջաղիս-Ցիխե» բերդն է: Հենց այս բերդի անունից էլ կրել են Ջաղինյան ազգանունը: Կողբ են եկել 1236 թվին, երբ թաթար մոնղոլները ավերել են հայկական բոլոր բերդերը: Ավագ Ջաթարյանը՝ լինելով հայ վրացական բանակի գլխավոր հրամանատար՝ 1236 թվին իր շուրջն է հավաքում իր զինակիցներին, այդ թվում նաև Ղվազվաբել Ջաղելուն, որը Ախալցխից գալիս է Կողբ՝ իր տոհմով: 1826-28 թթ Լոռու ձորի շրջափակումից հետո Ջաղինյան ազգի մի մասը մնում է Ստեփանավանում: Ներկայումս գյուղում 35 ընտանիքներ են:

14. Վարդումյան – Մելիք Վարդումը Ղարաբաղի նշանավոր դեմքերից մեկն է եղել, որի տոհմը Կողբ է եկել 18-րդ դարի վերջերին: 1826-28 թթ. Այս տոհմը ևս եղել է Լոռու ձորի բլոկադայում: Գյուղում կա 4 ընտանիք: Մնացածը մնացել են Վահագնի և Ճոճկան գյուղերում:

15. **Թամազյան** – Մելիք Թամազը 18-րդ դարի կեսերին եղել է Ղարաբաղի նշանավոր դեմքերից մեկը: 18-րդ դարի վերջերին, երբ Ղարաբաղում սկսվում է բնակչության մասսայական տեղաշարժ, Մելիք Թամազի տոհմը հաստատում է բնակություն Կոթի գյուղում, իսկ 1826-28 թթ Լոռու բլոկադայից հաստատվում են Կողբում, Ճոճկանում, Շնողում, Բերդավանում: Կողբում կա 14, Ղալաչայում՝ 6, Ճոճկանում՝ 15, Հաղպատում՝ 10, Շնողում՝ 15 ընտանիքներ:

16. **Զիլավյան** – Ղարաբաղի մելիք Զիլավի տոհմը Կողբ է եկել 18-րդ դարի վերջերին, իսկ 1826-28 թթ. Ազգի մեծ մասը մնացել է Ստեփանավանում: Կողբում կա 18 ընտանիք:

17. **Մալխասյան** – Այս ազգի հայրենիքը Տուրուբերան նահանգն է: Տոհմի հիմնադիրը Հայկ նահապետի Խոռ որդին է: Վաղարշակ թագավորի ժամանակ նրա թիկնապահ գնդի հրամանատարը եղել է Խոռի որդին: Այդ հրամանատարի պաշտոնի անունը եղել է Մալխազ, որտեղից էլ առաջացել է Մալխասյան ազգանունը: Սրա տղայի անունը եղել է Ղազար: Մասնակցել է 1828-29 թթ հայ-թուրքական պատերազմին: Տուրուբերանից այդ ժամանակ եկել են Շիրակ և ապա Լոռու ձոր: Այստեղից ցրվել են Կողբ, Օձուն, Ստեփանավանի Ուռուս գյուղը, Գյումրի և այլ վայրեր: Կողբում 16 ընտանիք են:

18. **Եսայան** – Ղարաբաղի մելիք Եսային պատմության մեջ նշված է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի նշանավոր դեմքերից մեկը: Նա առաջին անգամ Ղարաբաղում կազմավորել է կանոնավոր բանակ: 18-րդ դարի վերջերին սա տոհմը գալիս է Կոթի: 1826-28 թվերին տոհմը ցրվում է տարբեր տեղեր՝ Ճոճկան, Արճիս, Կողբ, Բարեկամավան, Կոթի: Կոթիում կա 2, իսկ Կողբում՝ 21 ընտանիք:

19. **Ղարագյոզյան** – Հայ Արշակունիների դինաստիան, պարսկական պարթև արշակունիների կրտսեր ճյուղն է: Տոհմի հիմնադիրը եղել է Տրդատ Ա թագավորը: Նախիջևանի մելիք Ղարագյոզը հենց այս տոհմից է, որի պատճառով էլ հենց այս պարթև Արշակունի իշխանից էլ առաջացել է Ղարագյոզյան ազգանունը: 18-րդ դարի կեսերին պարսիկների ճնշման տակ այս ազգի մի մասը ստիպված ընդունում է մահմեդականություն և անցնում Արաքս գետի մյուս ափը, մնացածները գալիս են և հանգրվանում Բարեկամավան գյուղում: 1826-28 թթ. Բաժանվում երկու մասի՝ մի մասը մնում է Բարեկամավանում, մյուս մասը հաստատվում է Կողբում: Կողբում կա 38 ընտանիք:

20. **Աղաբաբյան** – Աղաբաբյանները ունեն Ղարաբաղյան ծագում: Զորավար Աղաբաբը Ղարաբաղի նշանավոր դեմքերից էր, նրա տոհմը 18-րդ դարի վերջերին գալիս է Կողբ, իսկ 1826-28 թթ մի մասը մնում է Շամլուղից ոչ հեռու Բենդիկ գյուղում, ներկայումս Կողբում կա 34 ընտանիք:

21. **Բեջանյան** – Նրանք 18-րդ դարի վերջերին եկել են Կոթի Ղարաբաղից, իսկ 1826-28 թվերին ցրվել են տարբեր գյուղեր՝ Օձուն, Կողբ, Բերդավան, Լճկաձոր և այլ տեղեր: Կողբում կա 10 ընտանիք: Գյուղի Միրիջանյան ազգը Բեջանյան ազգի կրտսեր ճյուղն է:

22. **Խոջայան** – Այս ազգի հայրենիքը Ադրբեջանի Շաքիի շրջանի Բաշնջաղ գյուղն է: 18-րդ դարի կեսերին՝ 1736 թվականին Խոջա Աբրահամը իր տոհմով գալիս է Հաղպատ: 1828 թվականին այս տոհմի մի մասը գալիս և վերաբնակվում է Բերդավանում և Կողբում, մի մասը

մնում է Հաղպատում և հետագայում ցրվում Սանահին և Ակներ գյուղերում, որոնք կրում են Էվոյան ազգանունը: Կողբում կա 17 ընտանիք

23. Նասիբյան – Ղարաբաղի Բերդաձոր գյուղը գտնվում Բերձորից (Լաչին) ոչ հեռու: Կողբ եկել են 18-րդ դարի վերջերին: Ազգի մի մասը այսօր էլ բնակվում է Բերդաձոր գյուղում: Կողբում կան 60 ընտանիքներ:

24. Յարայան – 18-րդ դարի կեսերին Տոհմը Ղարաբաղից գալիս է և հանգրվանում Բերդավանից ոչ հեռու «Կարա-Բուղաղ» գյուղում: 1826-28 թվերին Յարայանները այլևս իրենց գյուղ չեն վերադառնում՝ նրանք իրենց հողատարածությունները փոխանակում են Բերդավանցիների համաձայնությամբ և նրա փոխարեն վերցնում Ղալաչայից ոչ հեռու Սալազեղանի հողատարածությունը և փոխադրվում Կողբ: Ներկայումս կա 23 ընտանիք:

25. Եղիկյան – 1826 թվին այս ազգը Արևմտյան Հայաստանից տեղափոխվելով ընկնում է Լոռու Ձորի շրջափակման մեջ: Այստեղից 1828 թ. բաժանվում է երկու մասի՝ մի մասը մնում է Դսեղում, իսկ մյուս մասը գալիս է Կողբ: Կողբում 12 ընտանիք են:

26. Բոզյան – Այս ազգի հայրենիքը Ապարանն է: Իսկական ազգանունը Բազոյան, ներկայումս այս ազգի մեծ մասը բնակվում է Ապարանում: 1820 թվականին պարսիկները ավերում են Ապարանը, որի հետևանքով այս ազգը տեղափոխվում է Լոռու ձոր: 1828 թվականին մի քանի ընտանիք տեղափոխվում են Կողբ: Կողբում 5 ընտանիք են:

27. Երկնափեշյան – Ամիրխանյան – Կողբի գերեզմանոցի հին քարերը վկայում են, որ Կողբի Երկնափեշյանները Ամիրխանյան տոհմից են: Մելիք-Ամիրխանը Նախիջևանից է: Նրա տոհմը 18-րդ դարի վերջերին Նախիջևանից գալիս է և հանգրվանում Կոթիից ոչ հեռու մի ազատ տեղ, որը մինչև օրս կոչվում է «Ամիրխանանց տնաստեղեր»: Հետագայում այս տոհմը փոխադրվում է և միանում Կոթի գյուղին: 1826 թվականին մոտակա Ղազախի գավառի թուրք ցեղերը, օգտագործելով հարմար պահը, պարսիկներին օգնելու նպատակով ներխուժում են հայաբնակ գյուղերը և հայերի գյուղերը դատարկվում են: Բոլոր կողմերից հայերը թափվում են Լոռու ձորը: 1828 թվականին, երբ ռուսական բանակը ազատագրում է Հայաստանը պարսիկներից և թուրքերից՝ Ամիրխանյան ազգի մի մասը մնում է Ստեփանավանում, մի մասը գալիս է Կողբ, իսկ մի մասը վերադառնում Կոթի: Այս տոհմի մի մասը ցրվում է Լոռու և Իջևանի տարբեր գյուղերում: 19-րդ դարի վերջերին լեզգիները Կողբի Ամիրխանյան ազգից մի երիտասարդ տղայի պատանդ են տանում և պահում չորս տարի, հետագայում նա փախչում է և գալիս: Ժողովուրդը տեսնելով նրա անսովոր տարազը, նրան անվանում են երկար փեշավոր մականունով, որից էլ առաջացել է այս ազգանունը՝ Երկնափեշյան: Նրանք այժմ 33 ընտանիք են:

28. Մուրադյանները - Մուրադյանները բավական մեծ տոհմ են: Արևմտյան Հայաստանը նրանց հայրենիքն է: 1826 թվականին այս տոհմը ևս ընկել է Լոռու ձորի շրջափակման մեջ, որից հետո տարբեր ուղղություններով ցրվել են տարբեր տեղեր: Մի խումբը մնացել է Ակներ գյուղում: Մի խումբը եկել է Ղալաչա, իսկ մյուս խումբը՝ Կողբ: Մնացածը գնացել են Արևմտյան Հայաստան, որոնք 1915 թվականի եղեռնի ժամանակ փախել են արտասահման: Այսօր Մուրադյաններից շատերը բնակվում են Երևանում և նրա հարակից շրջաններում: Կան մեծահարուստ Մուրադյաններ Գերմանիայում, որոնք 1941-45 թթ. Բավականին մեծ

գործեր են կատարել հայ գերիներին փրկելու համար, տարել են իրենց կալվածքները և պահել մինչև պատերազմի վերջը: Կողբում կան 9 ընտանիքներ:

29. Սահակյան – Աշխարհում դժվար թե լինի մի ազգ, որը ունենա հայ ժողովրդի նման խճճված և բարդ պատմություն: 4500 տարվա պատմություն ունեցող հայ ազգը իր աշխարհագրական դիրքով նման է մի կղզու՝ շրջապատված մահմեդական ցեղերով, որը հաճախակի հարվածի տակ է ընկել այս խաշնարած ցեղերի հուժկու ալիքներից: 10-րդ դարում մեր հարևան Ղազախը նախկինում եղել է Խալ-խալ անունով, Գարդմանա գավառի կենտրոնը, որի իշխանը եղել է հանրահայտ Սահակ Սևադա իշխանը: Նա ունեցել է երկու տղա և երկու աղջիկ: Տղաներից մեկի անունը եղել է Գրիգոր, իսկ մյուսի անունը՝ Դավիթ: Աղջիկներից մեկի անունը եղել է Սահականուշ, որը Աշոտ երկաթի կինն է եղել, իսկ կրտսերը Սահակադուխտը եղել է Սյունյաց գահերեց իշխան Վասակի կինը: Նեղ թշնամական հողի վրա գարդմանի հզոր իշխան Սահակ Սևադան ըմբոստանու է իր փեսա Աշոտ երկրորդի հետ: Աշոտ Երկրորդը կռվում է նրա հետ և Շամշադինի բերդում նրան գերի վերցնում և հանում նրա որդիներից մեկի աչքերը: Նրա մահից հետո նրա անունով տոհմը գրվում է Սահակյան ազգանունով: 1236 թվականին, երբ մոնղոլները գրավում են Քուռ գետի հովիտը Սահակ Սևադայի տոհմը նահանջում է դեպի կոթի, Գագ ամրոցը: 1826 թվականին Լոռու շրջափակումից հետո նրանք ցրվում են բազմաթիվ տեղեր՝ Շնող, Չորագյուղ, Բերդավան, Բաղանիս, Կոթի, Ոսկևան: Այս տոհմից ներկայումս կոթիում կան 10 , Կողբում՝ 9, Բաղանիսում՝ 20, Ոսկևանում՝ 10, Շնողում՝ 12, Չորագյուղում՝ 20, Լճկաձորում և Այրումում՝ 4:

30. Միմոնյան – Միմոնյան տոհմի հայրենիքը Նախիջևանն է: 18-րդ դարի երկրորդ կեսերին, երբ թուրքերը և պարսիկները ներխուժում են Նախիջևան, տեղի հայ բնակչությունը տեղահանվում է դեպի Հայաստանի լեռնային-անտառային հատվածները: Միմոնյան տոհմը հանգրվանում է Ոսկևան գյուղում: 1826-28 թթ բնակչության տեղաշարժի ժամանակ սրանք բաժանվում են մի քանի խմբերի և վերաբնակվում Կողբում, Սանահինում, Ոսկևանում և այլ գյուղերում: Կողբում կա 20 ընտանիք, Սանահինում՝ 30, Ոսկևանում՝ 2:

31. Քոչարյան - Ըստ պատմաբան-վիպասան Ս.Խանգադյանի ուսումնասիրման, Քոչարյանները հայ Ամատունի իշխանական տոհմից են: 18-րդ դարի վերջերին, երբ Ղարաբաղի հայությունը մասնակի չափով սկսեց տեղաշարժվել դեպի մայր հայաստան, Քոչարյանները ևս ոչ լրիվ կազմով եկան Հայաստան: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այս ազգի մի մասը դեռ այսօր էլ Ղարաբաղում է: 1826 թվականից Ղարաբաղից Բաղանիս գյուղում ապաստան գտած այս ազգի ընտանիքները ևս ընկնում են Լոռու ձորի շրջափակման մեջ: 1828 թվականին այս ազգը վերաբնակվում է Աթան, Դսեղ, Կողբ, Ղալաչա և Բաղանիս գյուղերում:

Բնակչության վերջին մեծ տեղաշարժը 1826-28 թթ. պարսկական արշավանքի ժամանակ

Դեպի Կողբ(→) Կողբից(←)

Օձուն ← Աբովյան

Ստեփանավան ← Ավագյան, Ջաղինյան, Ջիլավյան, Աբովյան

Դսեղ ← Եգանյան

Ահնիձոր ← Աբովյան

Թեղուտ ← Բարսեղյան

Հաղպատ → Խոջայան ← Թանդիլյան

Ճոճկան ← Վարդումյան

Ախքյորփի ← Թանդիլյան

Բենդիկ ← Աղաբաբյան

Ղալաչա ← Ազատյան

Բարեկամավան → Ղարազյոզյան

Վահագնի ← Վարդումյան

Ոսկեպար → Փաշիկյան

Սանահին ← Անանյան

Իջևան ← Անանյան

Նոյեմբերյան ← Անանյան, Բուդաղյան

Կոթի → Եսայան, Թամազյան, Սահակյան, Երկնափեշյան, Բեջանյան, Հախվերդյան, Ղազարյան

Ղարաբաղ → Քոչարյան

Ոսկևան → Սիմոնյան, Եղիազարյան

Ապարան → Բոզյան

Շնող ← Անանյան

Մարգահովիտ ← Անանյան

Դիլիջան ← Անանյան

Արմ. Հայաստան → Եղիկյան, Մուրադյան, Մալխասյան

Տիգրան Ազատյան – Կողբի ազգերի պատմությունը